

Առաջնորդվելով Հանրաքվեի մասին օրենքի 20-րդ եւ Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածներով՝ 2015 թվականի դեկտեմբերի 6-ին կայանալիք Սահմանադրության հանրաքվեի պաշտոնական քարոզարշավի ժամանակահատվածում ԱՐ հեռուստաընկերությունը վճարովի եթերաժամանակի 1 ռոպեի գինը սահմանում է 20 հազար դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը: Վճարովի եթերը տրամադրվելու է ամեն օր, ժամը 18-ից 20:30-նն ընկած հատվածում, ԱԺ-ում ներկայացված յուրաքանչյուր խմբակցությանը օրական 7 ռոպե: Չօգտագործված ռոպեները հաջորդ օր չեն տեղափոխվում: ԱՐ հեռուստաընկերությունը երաշխավորում է հավասարության սկզբունքը քարոզարշավին մասնակցող բոլոր խորհրդարանական խմբակցությունների համար՝ առանց խտրականության:

